Հայաստանի կենսաբ. հանդես, 4(68), 2016

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

(ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Միքայելի Հարությունյանի 70-ամյա հոբելյանի առթիվ)

Ռուբեն Միքայելի Հարությունյանը ծնվել է 1946թ. սեպտեմբերի 23-ին Երևանում, մտավորականների ընտանիքում: 1964թ. գերազանցությամբ ավարտելով Երևանի Պուշկինի անվան թիվ 8 միջնակարգ դպրոցը, ընդունվել է Երևանի պետական համալսարան՝ կենսաբանության ֆակուլտետ: Դեռ ուսանողական տարիներից նա առանձնանում էր գիտելիք ձեռքբերելու իր անհագ ցանկությամբ, բարձր առաջադիմությամբ, գիտահետազոտական աշխատանք կատարելու ունակությամբ և պարկեշտ, կիրթ պահվածքով: Այդ հատկանիշները չէին կարող աննկատ մնալ ֆակուլտետի ղեկավարության կողմից, և շուտով Ռուբեն Հարությունյանին թույլատրվում է անցնել անհատական պլանով ուսուցման: 1969թ. գերազանցությամբ ավարտելով համալսարանը և ստանալով կենսաբանի որակավորում գենետիկա մասնագիտացմամբ, նա ընդունվում է Մոսկվայի Բժշկական գենետիկայի ինստիտուտի ասպիրանտուրա և 1972թ պաշտպանում թեկնածուական ատենախոսություն ակադեմիկոս Ն.Բոչկովի ղեկավարությամբ: Վերադառնալով Հայաստան Ռուբեն Հարությունյանը որպես գիտաշխատող աշխատանքի է անցնում ԵՊՀ գենետիկայի և բջջաբանության ամբիոնին կից գործող պրոբլեմային լաբորատորիայում՝ իր հետագա գիտամանկավարժական ողջ գործունեությունը կապելով հարազատ ամբիոնի հետ: Նպատակասլաց գիտական աշխատանքն ամբիոնում, գիտական ստաժավորումը ԱՄՆ-ում, գիտական սերտ համագործակցությունը Մոսկվայի Բժշկական գենետիկայի ինստիտուտի և այլ գիտական կենտրոնների մասնագետների հետ պսակվեցին հաջողությամբ, և 1981 թվականին, 35 տարեկանում, Ռուբեն Հարությունյանը պաշտպանում է դոկտորական ատենախոսություն: Շուտով նա ամբիոնին կից գործող պրոբլեմային լաբորատորիայի ղեկավարն էր, իսկ 1991 թվականից մինչ օրս՝ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչն է: 2006 թվականին պրոֆեսոր Ռուբեն Հարությունյանն ընտրվում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Վերջին 10 տարիների ընթացքում պրոֆեսոր Ռուբեն Հարությունյանը համատեղությամբ աշխատում է նաև ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտում, իսկ այս տարվանից նաև ՀՀ ԳԱԱ Նախագահությունում՝ որպես Բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:

Ներկայումս պրոֆեսոր Ռ.Հարությունյանը Հայաստանում գենետիկայի բնագավառի առաջատար գիտնականն է, մեզանում գենետիկայի, մասնավորապես՝ էկոլոգիական և թունաբանական գենետիկայի ու մոլեկուլային բջջագենետիկայի դպրոցի հիմնադիր:

Բազմաբնույթ է նրա գիտական հետազոտությունների շրջանակը: Նրա ղեկավարությամբ տասնյակ տարիներ շարունակ իրականացվել է Հայաստանի վնասակար արտադրություններում ներգրավված աշխատողների բջջագենետիկական և գենետիկական մոնիթորինգ, իսկ Ֆրանսիայի և Իսրայելի գիտնականների հետ համատեղ առաջին անգամ բացահայտել է պարբերական հիվանդությամբ տառապողների արյան պլազմայում մուտագեն գործոնի առկայությունը: Պրոֆեսոր Ռ.Հարությունյանի անմիջական նախաձեռնությամբ Հայաստանի Չեռնոբիլի լիկվիդատորների խմբում ուսումնասիրվել է հակաօքսիդանտների բուժիչ ազդեցությունը, Անդրկովկասում առաջին անգամ ներդրվել է լեյկոզների մոլեկուլային-բջջագենետիկական ախտորոշում, ինչի շնորհիվ ար-

յան քաղցկեղով տառապող հարյուրավոր հիվանդներ տարիներ շարունակ անվճար ստացել են կենսականորեն կարևոր դեղամիջոց: Պրոֆեսոր Ռ.Հարությունյանն աջակցել է Հայաստանում պրենատալ բջջագենետիկական ախտորոշման ներդրմանը, իրագործել է նաև բջջագենետիկական տվյալների մաթեմատիկական մոդելավորման ուսումնասիրություններ և այլն:

Պրոֆեսոր Ռ.Հարությունյանի և իր աշխատակիցների ջանքերով ներդրված մեթոդական մոտեցումները հնարավորություն տվեցին իրականացնել Հայաստանի տարբեր շրջանների ջրի և հողի աղտոտվածության գենետիկական ռիսկի գնահատումը՝ կիրառելով տեղաբնակ կենդանական կենսացուցիչներ: Այդ հետազոտությունները Ռուսաստանի Դաշնության գիտնականների հետ համագործակցության հիմք դարձան, ինչն էապես ընդլայնեց Սևանա լճի և այլ ջրային էկոհամակարգերի աղտոտվածությանն ուղղված ուսումնասիրությունների սպեկտրը: Ռուբեն Հարությունյանի կողմից ուսումնասիրության նոր մոտեցումներ են մշակվել նաև բույսերի գենետիկայի բնագավառում, որոնք հիմք հանդիսացան այդ ոլորտում Իտալիայի, Իսպանիայի և Գերմանիայի տարբեր առաջատար գիտական կենտրոնների հետ կայուն համագործակցության:

Պրոֆեսոր Ռուբեն Հարությունյանի նպատակասլաց գիտահետազոտական գործունեությունը միշտ ուղեկցվել է լարված և բազմաբնույթ դասախոսական աշխատանքով: Անգնահատելի է նրա մանկավարժական ավանդն՝ ուղղված երիտասարդ սերնդի կրթմանը և գիտական առաջընթացին: Նրա ջանքերով բազմաթիվ ուսանողներ և երիտասարդ գիտնականներ հնարավորություն են ստացել ուսումը շարունակելու և իրականացնելու ամբողջ շարք գիտական ուսումնասիրություններ արտասահմանյան առաջատար համալսարաններում և գիտական կենտրոններում:

Պրոֆեսոր Ռ.Հարությունյանը դասախոսություններ է կարդացել տասնյակ երկրներում: Նա մասնակցել է արտասահմանյան տարբեր դրամաշնորհներով ֆինանսավորվող գիտական և ուսումնական ծրագրերի կատարմանը, կազմակերպել է NATO-ի գիտաժողով ԱՄՆ-ում՝ նվիրված գենետիկական թունաբանության նորագույն մեթոդներին: Ռ. Հարությունյանը Հայաստանի ներկայացուցիչն է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ռադիոկենսաբանության խորհրդում, և վերջին տարիներին բազմիցս հրավիրվել է Դուբնա ճառագայթային գենետիկայի ասպարեզում դասախոսություններ կարդալու: Նա նաև երկու միջազգային ամսագրերի խմբագրական կոլեգիաների անդամ է, «Հայաստանի կենսաբանական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալ:

Պրոֆեսոր Ռ.Հարությունյանի գիտական հետազոտությունների արդյունքները, բազմաթիվ միջազգային գիտաժողովներում զեկույցները բերել են նրան իրավամբ միջազգային ճանաչում: Կուտակելով գիտամանկավարժական գործունեության հարուստ փորձ, կրթության և գիտության ոլորտում ներդնելով նորարարական մոտեցումներ, նա գիտական զեկույցներով և դասախոսություններով հանդես է եկել ԱՄՆ, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ռուսաստանի և այլ երկրների առաջատար գիտական կենտրոններում և համալսարաններում՝ բարձր պահելով հայաստանյան գիտության և Երևանի պետական համալսարանի հեղինակությունը: Նրա արգասաբեր գործունեության ապացույցն ավելի քան 290 գիտական աշխատություններն են, այդ թվում՝ 4 մենագրություն և ուսումնական ձեռնարկները, 170 գիտական հոդվածները, որոնցից 60-ը միջազգային գրախոսվող ամսագրերում, Springer միջազգային հրատարակչությունում անգլերեն լեզվով լույս ընծայած հակամուտագենեզի օրինաչափություններին նվիրված ունիկալ մենագրությունը և այլն: Պրոֆեսոր Ռ. Հարությունյանն արդյունավետ գիտական գործունեության ընթացքում ղեկավարել է թեկնածուական 20 ատենախոսություն, եղել դոկտորական 2 ատենախոսության գիտական խորհրդատու: Նա վերջին տարիներին անընդմեջ ՀՀ ԿԳՆ Գիտության կոմիտեի կողմից կազմակերպվող գիտական բարձր արդյունավետություն ունեցող գիտնականների մրցույթի հաղթողների շարքում է, բազմիցս արժանացել է հանրապետության և ԵՊՀ բարձր պարգևների, մեդալների:

«Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբագրության կողմից հոբելյանի առթիվ շնորհավորելով գիտական լայն մտահորիզոն և մարդկային հմայք ունեցող հարգելի պրոֆեսորին մաղթում ենք քաջ առողջություն, երիտասարդական ավյուն, չխամրող խանդավառություն և ամենայն բարիք:

Է.Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Հայաստանի կենսաբանական հանդեսի»
գլխավոր խմբագիր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ